

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱ

Անցնող Երկու տարիներու գեղեցիկ աամնդութեան հետեւողութեամբ, այս տարի ալ թեմական այցելութիւն տուինք Նոր Զելանտի հայերուն, որոնք վերջին տարիներուն քնակութիւն հաստատած են գլխաւորաբար Նոր Զելանտիայի Օգլընտ եւ Ուելինկթըն քաղաքներուն մէջ:

Յը. 3 յունիսի 2000-ին Սիւնհեյն ճամբայ ելելով նոյն օրն իսկ հասանք Օգլընտ, ուր օդակայան դիմաւորութեան եկած էին տեղւոյն հայորդիները: Աւելի ուշ ներկայ եղանք գաղղարային հաւաքին, ուր դպրոցական աշակերտները տպաւորիչ ելոյթ ունեցան. հաւաքի մնացեալ ժամերը անցուցին հայորդիներու հետ, անոնց տալով եկեղեցական-ազգային հրատապ հարցերու շուրջ անհրաժեշտ տեղեկութիւններ:

Կիր. 4 Յունիսի առաւօտուն, Օգլընտի վարչական կազմի հետ ժողով գումարեցինք, ուր քննարկեցինք փոքրաթիւ հայութեան ներկան ու ապագան հետաքրքրող հարցերը: Նոյն օրը յետ միջօրէին Թաքալիւնայի Անկլիքան եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ մատուցեցինք եւ քարոզեցինք. երգեցողութիւնը կատարեց նորակազմ «Շնորհալի» երգչախումբը, Բարեշնորհ Մարկոս Սարկալագ հաշմտեւանի ղեկավարութեամբ: Յընթացս Ս. Պատարագի Արա Օվանէտօսի ՌԻՐԻՐ կրելու արտօնութիւն շնորհեցինք: Ս. Պատարագին ներկայ գտնուեցան Անկլիքան եկեղեցւոյ եւ Անտիոքի Ուղղափառ եկեղեցւոյ հոգեւոր հովիւները Տէր Իշըրտ եւ Տէր Մաթթը Բահանները: Հայորդիներ Ս. Հաղորդութիւն ստանալով, իրենց հաւատքը ու հայրենասիրութիւնը վերանորոգեցին ու վերահաստատեցին:

Յաւարտ Ս. Պատարագի, եկեղեցւոյ սրահին մէջ ՏՆՕՐՀՆԷԲ-ի արարողութիւն կատարեցինք: Վարդութեան Ատենասպետուհի Տիկ. Սալթի Ելտըզեան, բարի գալստեան խօսքով հանդէս եկաւ, ներկայացնելով ապագային կառուցուելիք ՀԱՅ ԿԵՂԻՐՈՒՆ-ի բազմակառուցական-եկեղեցի, դպրոց, գրադարան-թանգարան- ծրագիրը: Ապա մեր խօսքը կատարեցինք, գնահատելով ու քաջալերելով տարուած հայապահպանման նուիրական աշխատանքը:

Այստեղ արժէ նշել որ աւելի քան 6 ժամ հեռու Նէլիիդէն հայ ընտանիք մը Օգլընտ եկած էր, ներկայ գտնուելու Ս. Պատարագին ու հաւաքութեան:

Բշ. 5 յունիսի առաւօտուն, Շինարարական Յանձնախումբի անդամներուն հետ հանդիպում ունեցանք, ուր հանգամանօրէն քննարկեցինք ապագային կառուցուելիք ՀԱՅ ԿԵՂԻՐՈՒՆ-ի բազմակառուցական ծրագիրը:

Նոյն երեկոյեան տեղի ունեցաւ գաղղութիւն հաւաք, ուր դպրոցական աշակերտներու կողմէ գործադրուեցաւ գեղարուեստական կոնկիլ յայտագիր մը՝ երգ, նուագ, պար եւ արտասանութիւն, արժանանալով ներկայներու երկարատեւ ծափերուն:

Գշ. 6 յունիսի երեկոյեան, Տոքթ. Ռուբէն Ազիզեանի -դասախօս Օգլընտ Համալսարանի քաղաքական բաժանմունքի- կարգադրութեամբ, բանախօսութիւն մը տուինք «Հայաստանի Հանրապետութեան եւ Էթնային Դարաբաղի Հանրապետութեան ներկայ կացութիւնը» նիւթին շուրջ. ընտրանի հասարակութիւն մը՝ հայ եւ օտար, ներկայ էին բանախօսութեան: Մեր խօսքին մէջ անդրադարձանք 1915-ի Մեծ Եղեռնի մասին եւս:

Դշ. 7 յունիսի առաւօտուն, գաղղութիւն նախապետ ու մեզի երկարամայ ծանօթ Տոքթ. եւ Տիկ. Մինաս Էլիասին այցելութիւն մը տուինք, վարչական Տիար Յակոբ Ելտըզեանի ընկերակցութեամբ: 85-ամեայ Տոքթ. Մինասը խոր յարգանքով իր ուրախութիւնն ու գոհունակութիւնը յայտնեց իր նկատմամբ ցուցաբերուած ուշադրութեան համար:

Յետ միջօրէին, Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Սալթի Ելտըզեանի, եւ Տիար Մոն Զօփրայի -1860-ական թուականներուն Նոր Զելանտա հաստատուած հայ ընտանիքի գաւակ-, քաղաքավարական այցելութիւն մը տուինք Նոր Զելանտայի Գլխաւոր Դատարար, հայազգի ԵՃԵ Սթրոնի Էլիասի Chief Justice Dame SIAN SERPOOHE ELIAS, որ Էլիաս Ամուի դուստրն է, եւ որուն հետ երկար տարիներէ իվեր ծանօթ ենք: Դատարար Էլիասը մեծ հետաքրքրութեամբ հետեւեցաւ Նոր Զելանտայի տարածքին փոքրաթիւ հայութեան արձանագրած յաջողութեանց մասին: Հայազգի Դատարար Էլիաս, Նոր Զելանտայի առաջին իգական սեռի Գլխաւոր Դատարարն է:

Եշ. 8 յունիսի առաւօտեան կանուխ ժամերուն, ընկերակցութեամբ Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Սալթի Ելտըզեանի ճամբայ ելանք դէպի մայրաքաղաք Ուելինկթըն, ուր ապառով հասանք երեկոյեան ժամերուն: Նոյն օրն իսկ Տէր եւ Տիկ. Վարուժան եւ Սիւրվարդ Մուրաւտեանի բնակարանին մէջ հանդիպում ունեցանք Ուելինկթընի փոքրաթիւ հայերուն հետ, խօսելով յաջորդ երկու օրերու ծրագրի մասին:

Ուր. 9 յունիսի առաւօտուն, նախապէս առնուած ժամադրութեան համաձայն, հանդիպում ունեցանք Նոր Զելանտայի Ընդհանուր Կառավարիչ Սթը Մաթթը Պոյզի եւ Էլտի Մերի Հարտի հետ: Նոր Զելանտայի Ընդհանուր Կառավարիչ Սթը Մաթթը Պոյզի եւ Էլտի Մերի Հարտի եւս 1860-ական Պոյզի Sir Michael and Lady Marie Hardie Boys-ի հետ -Տիկին Մերի Հարտի եւս 1860-ական

թուականներուն Նոր Զելանդա հաստատում հայ ընտանիքի զաւակ է-: Յիշեալ հանդիպման մեզի ընկերացան Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Սալբի Ելտըզեան, եւ Տիար Մոն Զօհրապ - զարմիկը Տիկ. Մերի Հարտի Պոյզի-: Ընդհանուր Կառավարիչը եւ Ազնուաւիպ Տիկինը մեծ հետաքրքրութիւն ցուցաբերեցին Հայաստանի, Արցախի եւ Ափիւղքի հայութեան մասին տրուած տեղեկութիւններու նկատմամբ: Տիկին Պոյզը իր խոր գոհունակութիւնը յայտնեց որ առաջին անգամ ըլլալով հայ հոգեւորականի մը կը հանդիպի: Պատշաճ հիւրասիրութենէ ետք, լաւագոյն տպաւորութիւններով Ընդհանուր Կառավարիչէն ու Տիկինէն բաժնուեցանք:

Շբ. 10 յունիսի առաւօտուն Ուելինկթընի Անկլիքան Մայր Տաճարի մատուոյն մէջ Ա. Պատարագ մատուցեցինք ու քարոզեցինք. պատարագին ներկայ էին Ուելինկթընի մէջ բնակութիւն հաստատած հայորդիները, ինչպէս նաեւ Նեստորական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արքահամ Բահանան: Պատարագի աւարտին հայաստանեայց եկեղեցւոյ ծէսին համաձայն օրհնեցինք Շանթ Յակոբեանի եւ Սեդա Մուրատեանի միութիւնը, որոնք դեկտեմբեր 1999-ին պսակուած էին արդէն: Աւելի ուշ, եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ հաւաք, ուր նուագով ու երգով հանդէս եկան փոքրիկներ Աննա եւ Ալեքսանտր Գրորմաթեան եւ մեծ մայր Գրորմաթեան, իսկ խօսքով հանդէս եկան Տիար Վարուժան Մուրատեան, Տիկին Սալբի Ելտըզեան եւ ապա կատարեցինք փակման խօսքը:

Թեմական այցելութեան ընթացքին միշտ շրջապատուած եղանք հայորդիներով. իսկ ժամանակի ներսը չափով առիթը ունեցանք ոմանց բնակարանները այցելել եւ օրհնել:

Կիր. 11 յունիսին, թեմական այցելութիւնը աւարտելով, Սիւնի, մեր պաշտօնատեղին վերադարձանք:

Այս այցելութիւնը գեղեցիկ առիթ հանդիսացաւ հայ հաւատքի եւ հայկական ոգիի գիտակցութիւնը վերանորոգելու Նոր Զելանդայի փոքրաթիւ հայութեան աւօրեայ կեանքին մէջ:

Ահա ՀԱՅՈՒ ԲԵԿՈՐՆԵՐ Նոր Զելանդայի մէջ:

Աղան Արքեպս. Պալիօզեան
Առաջնորդ